

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԺՈՂՈՎԸ

Posted on October 18, 2012 by Keghart

NATIONAL CONGRESS OF WESTERN ARMENIANS
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



CONGRÈS NATIONAL DES ARMÉNIENS OCCIDENTAUX
НАЦИОНАЛЬНЫЙ КОНГРЕСС ЗАПАДНЫХ АРМЯН

Category: [Opinions](#)



✘Մամլո հաղորդագրություն, Երևան, 18 Հոկտեմբեր 2012

Երևանում կայացել է Արևմտահայոց Ազգային Համագումարի տարեկան ընդհանուր ժողովը

Սույն թվականի հոկտեմբերի 12-ին Երևանում «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Արարատ» սրահում, կայացավ Արևմտահայոց Ազգային Համագումարի (ԱԱՀ) տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին Ազգային համագումարի 40 անդամներ Ֆրանսիայից, Ռուսաստանից, Հայաստանի Հանրապետությունից, ԱՄՆ-ից, Արգենտինայից, Լիբանանից, Կանադայից, Շվեյցարիային, Չեխիայից և Ավստրիայից, ինչպես նաև 28 պաշտոնքպես հրավիրված հյուրեր:

✘Մամլո հաղորդագրություն, Երևան, 18 Հոկտեմբեր 2012

Երևանում կայացել է Արևմտահայոց Ազգային Համագումարի տարեկան ընդհանուր ժողովը

Սույն թվականի հոկտեմբերի 12-ին Երևանում «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Արարատ» սրահում, կայացավ Արևմտահայոց Ազգային Համագումարի (ԱԱՀ) տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին Ազգային համագումարի 40 անդամներ Ֆրանսիայից, Ռուսաստանից, Հայաստանի Հանրապետությունից, ԱՄՆ-ից, Արգենտինայից, Լիբանանից, Կանադայից, Շվեյցարիային, Չեխիայից և Ավստրիայից, ինչպես նաև 28 պաշտոնքպես հրավիրված հյուրեր:

Նիստը հանդիսավոր կերպով բացեց ԱԱՀ նախագահ Սուրեն Սերայտարեանը: Մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին ՀՀ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հիշատակը, որը մեծ ավանդ է ունեցել ԱԱՀ-ի կայացման գործում: Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ Ընդհանուր ժողովին հրավիրված ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ով շեշտեց ԱԱՀ և հայրենակցական միությունների համագործակցության կարևորությունը: Համագումարի աշխատանքները ողջունեց նաև ՀԲԸՄ կենտրոնական խորհրդի անդամ Ռուբեն Քեչիշյանը (Արգենտինա):

Արևմտահայոց Ազգային Համագումարի պատվիրակները Կազմակերպության մեջ նոր անդամներ ընդունելուց հետո լսեցին մասնաճյուղերի ներկայացուցիչների և նախագահության անդամների հաշվետու զեկույցները: Ելույթ ունեցան ՀՀ մասնաճյուղի նախագահ Ավագ Խաչատրյանը, ԱԱՀ փոխնախագահ Կարեն Միքայելյանը, ԱՄՆ մասնաճյուղի նախագահ Սոնա Եագուպեանը և Արգենտինայի մասնաճյուղի անդամ Ռոբերտո Մալխասեանը: ԱԱՀ նախագահ Սուրեն

Սերայտարեանը, ԱԱՀ փոխնախագահներ գներալ Նորատ Տեր-Գրիգորյանցը և Կարեն Միքայելյանը ժողովի մասնակիցներին զեկուցեցին Լիբանանում, Հյուսիսային Ամերիկայում, Արգենտինայում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում ԱԱՀ նախագահության անդամների առաքելությունների և գործունեության մասին: Ի թիվս այլ հարցերի ներկայացվեցին Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի և Կ. Պոլսի պատրարքարանի պաշտոնյաների հետ հանդիպումների արդյունքները: ԱԱՀ գործունեության ֆինանսական հաշվետվությունը ներկայացրեց ԱԱՀ գլխավոր քարտուղար Վարուժան Կյուրեոյանը (Ֆրանսիա):

Նիստի երկրորդ մասում ԱԱՀ-ի պատվիրակները քննարկեցին ժամանակակից Թուրքիայում քաղաքացիական հասարակության հետ հնարավոր համագործակցության հեռանկարները: Որոշում ընդունվեց ստեղծել երկու աշխատանքային մասնագիտական խմբեր. առաջինը՝ Թուրքիայում Օսմանյան կայսրության հայ քաղաքացիների ժառանգորդների իրավունքների գնահատման ու վերականգնման ուղղությամբ և երկրորդը՝ իրավական հարցերով:

ԱԱՀ-ի Ազգային Խորհրդի կազմում ընտրվեցին չորս նոր անդամներ, որից հետո եզրափակիչ ելույթով հանդես եկավ Սուրեն Սերայտարեանը, ով կոչ ուղղեց Ազգային Խորհրդի անդամներին՝ շարունակել Կազմակերպության կայացման և զարգացման գործընթացը:

Արևմտահայերի Ազգային Համագումարի ընդհանուր ժողովը նաև խստորեն դատապարտեց Ադրբեջանի ղեկավարության ագրեսիվ դիրքորոշումը Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների և հայ ժողովրդի նկատմամբ, որը հերթական անգամ դրսևորվեց հայ սպա Գուրգեն Մարգարյանի դաժան սպանության համար ցմահ ազատազրկման դատապարտված Ռամիլ Սաֆարովի ազատ արձակմամբ:

ԱԱՀ անդամները եկան այն համոզման, որ Արցախի հիմնախնդրի լուծման պատրվակով հայկական կողմից զիջումներ պահանջելը անհիմն են այն պայմաններում, երբ դատապարտված չեն Ադրբեջանում հայերի ջարդերը, չեն փոխհատուցվել դրանց արդյունքում հայ ժողովրդի կրած վնասները: Պատվիրակները շեշտեցին, որ Արցախի ազատագրման ճանաչումը միջազգային հանրության կողմից անհրաժեշտություն է և որ արցախահայության ինքնորոշման իրավունքը անձեռնմխելի է:

ԱԱՀ ժողովը նաև խիստ մտահոգություն հայտնեց Սիրիայում ահազնացող ճգնաժամի պայմաններում սիրիահայության և Սիրիայի ժողովրդի ծանր վիճակում հայտվելու կապակցությամբ: Շեշտվեց այն կարևոր հանգամանքը, որ ժամանակին Սիրիայի ժողովուրդը մեծահոգաբար ընդունեց Մեծ Եղեռնից մազապուրծ եղած հայերին:

ԱԱՀ ընդհանուր ժողովի աշխատանքները փակված հայտարարվելուց հետո պատվիրակները մեկնեցին Ծիծեռնակաբերդի բարձունք, որտեղ ծաղկեպսակ դրեցին

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրին:

